

**Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն ու Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը շրջայց են կատարել մարզի բուժ.հաստատություններում**  
18.08.2018

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանի ուղեկցությամբ այսօր Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը շրջեց Կոտայքի մարզի Գառնու, Աբովյանի, Հրազդանի, Եղվարդի և Չարենցավանի բուժ.հաստատություններում:

Այցի շրջանակներում նախարարը մարզպետը, փոխմարզպետ Լարիսա Մադոյանը հանդիպումներ ունեցան այս կառույցների աշխատակազմերի հետ, քննարկեցին առկա խնդիրները, անելիքները և հեռահար պլանները:

Ռոմանոս Պետրոսյանն իր խոսքում անդրադարձավ մարզի առողջապահական ոլորտում առկա խնդիրներին՝ վստահ արձանագրելով, որ չլուծվող խնդիրներ չկան, պարզապես անհրաժեշտ է իրատեսական պլանավորում և կոնկրետ քայլեր:

Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն էլ ասաց, որ իր առջև՝ որպես Առողջապահության նախարարի, խնդիր է դրել շեշտադրել ոչ թե «հիվանդապահությունը» (ինչպես եղել է նախկինում), այլ առողջության առաջնային պահպանությունը: «Այս կոնտեքստում պետք է ամրագրել մի կարևոր դրույթ. Եթե առաջնային առողջապահության կենտրոնները, ինչպիսին է, օրինակ, պոլիկլինիկան, գործեն բարձր արդյունավետությամբ, ապա ստացիոնար բուժման կարիք ունեցողների թիվը զգալիորեն կարող է նվազել: Եվ այս առումով մեր առաջիկա ծրագրերում մենք մեծապես ուշադրությունը կենտրոնացնելու ենք հենց այս հաստատությունների աշխատակիցների վրա»,- ասաց Ա. Թորոսյանը:

Ոլորտի մասնագետները բարձրաձայնեցին մի շարք խնդիրներ, որոնց շուրջ նախարարն ու մարզպետը հայտնեցին հստակ դիրքորոշումներ: Նախարարի խոսքով՝ հաջորդ տարի առողջապահության ոլորտում ակնկալվում է ունենալ բյուջետային աճ, որն ուղղվելու է հենց առողջության առաջնային պահպանության կենտրոններին:

Այցի շրջանակներում մարզպետարանում տեղի ունեցավ նաև խորհրդակցություն մարզի տարբեր բուժ.հաստատությունների ղեկավար մարմինների հետ, ովքեր հնարավորություն ունեցան անմիջական հարցեր ուղղել նախարար Արսեն Թորոսյանին և մարզպետ Ռոմանոս Պետրոսյանին: Հարցերն առնչվում էին մի շարք ոլորտային խնդիրների, ինչպիսիք են ապահովագրական բժշկության ներդրման համակարգի անհրաժեշտությունը, ֆինանսական խնդիրները, կառավարման մոդելի փոփոխության անհրաժեշտությունը և այլն:

Նախարարը վստահեցրեց, որ բոլոր վերոնշյալ ուղղություններով տարվում են աշխատանքներ, որոնց արդյունքները հայտնի կլինի 1-2 ամսից սկսած: